ՀՀ Արագածոտնի մարզի § Աշտարակ քաղաքի Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական դպրոց¦ ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ դասվարի (14 դասաժամ), անգլերենի (2 դասաժամ) և մաթեմատիկայի (15 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

ՈՒսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը:

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափսի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող (դիպլոմ), (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. §Հանրակրթության մասին ¦ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստատուղթ,
7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ,
10. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից թվով 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում),
11. §Հանրակրթության մասին¦ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ,
12. §Հանրակրթության մասին¦ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդուման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 11-ը ներառյալ ,ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 16-ին ժամը 14:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական դպրոցում. Հասցեն Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Գեներալ Սաֆարյանի փողոց, շենք 10:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 093 01-32-83: